

բայի պալատի, ջրմուղի, կոյտուռ ու նրա մաքրիչ կառուցվածքների շինարարությունը:

Մեր կողեկտիվը հավաստիացնում է ՀԿՊ կենտկոմին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին և ժողովներին, որ նա չի խնայի ուժերն

ու էներգիան իր առջև դրված խնդիրները կատարելու համար, որոնք անշափ կարենոր են յոթնամյա պլանով ռեսպուբլիկայում նախագծված վիթխարի կապիտալ աշխատանքներն իրացներու գործում:

## Արտադրության Էկոնոմիկա և կազմակերպում

### ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Գ. ԽՈՐԱՍԱՆՑԱՆ  
Խճճեներ

Ինչպես ցույց է տվել մեր երկրի բազմամյա փորձը, աշխատանքի արտադրողականության բարձրացման և նրա արժեքի իշխցման հիմնական գործոնները հանդիսանում են, առաջին հերթին, աշխատատար պրոցեսների կոմպլեքսացին մեքենայացման լայն կիրառումը և հավաքովի երկաթբետոնների կոնստրուկցիաների արմատավորումը:

1-ին աղյուսակում բերվում է ամենից ավելի աշխատատար պրոցեսների կոմպլեքսացին մեքենայացման մակարդակը, որն արտահայտված է Հայկ. ՍՍՌ Շինարարության մինիստրության գծով վեցերորդ հնգամյակի տարիներին տարվող աշխատանքների ընդհանուր ծավալի տոկոսներով:

Շինարարության կոմպլեքսացին մեքենայացման էֆեկտիվությունը ամենից առաջ արտահայտվում է շենքերի և կառուցումների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային ծախսումները տնտեսելու մեջ:

Իհարկե, միշտ չէ, որ հնարավոր է լինում աշխատանքային ծախսումների տնտեսումը հայտաբերել մեքենայացված եղանակով ու ձեռքով կատարված աշխատանքների միենույն կոմպլեքսը համեմատելու միջոցով:

Ներկայումս կառուցներում և կառուցվածքներում գերակշռում են աշխատանքների այնպիսի

տեսակներ, որոնք ըստ իրենց բնույթի և ծավալի հնարավոր չեն ձեռքով կատարելու Այսպես, ներ-

Աշխատանքների անվանումը	Աղյուսակ 1				
	Փաստորեն 1956թ.	1957թ.	Պ Լ Ա Ն 1958թ.	1959թ.	1960թ.
Հողարկն աշխատանքներ . . . . .	62	65	68	75	72
Քար, ավազ, կողմիճ, խիճ և խարամ բեռնելու ու բեռնաթափելու աշխատանքներ . . . . .	48	50	64	65	66
Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժումը . . . . .	72	75	81	82	84
Բետոնի պատրաստում . . . . .	52	55	67	70	74
Շաղաթի պատրաստում . . . . .	50	53	68	70	73
Բետոնի փոխադրումն ու գարսումը՝ բետոնային խառնուրդի խտացումով . . . . .	47	48	49	50	53
Մվազային աշխատանքներ . . . . .	—	—	3	10	15
Ներկարարական աշխատանքներ . . . . .	8	15	25	35	40
Քարի արդյունահանումն ու իհրամշակումը . . . . .	—	10	20	40	50
Ավագի և կոպիճի արդյունահանումը ավագահանքներում . . . . .	65	70	79	82	83

կայում շենքերը մոնտաժվում են մինչև 7 տոննա կշռող խոշոր էլեկտրանտային կոնստրուկցիաներից, հիգրոսիսինիկական կառուցվածքները իրականացվում են հողահան մեքենաների, էքսկավատորների, ամբարձիչների, հղող ինքնաթափերի և այլն օպերատորների կողմանը մեքենաների, էքսկավատորների, ամբարձիչների, հղող ինքնաթափերի և այլն օպերատորների կողմանը մեքենաների, էքսկավատորների, հղող ինքնաթափերի և այլն օպերատորների, համեմատել աշխատանքային ծախսումները, երբ մի շարք աշխատանքները կատարվում են մեքենայացված եղանակով ու ձեռքով, և հաշվել շինարարության մեջ կոմպլիքսային մեքենայացման ընդհանուր մակարդակը բարձրացնելու շնորհիվ աշխատանքի արտադրողականության մեծացման հնարավորությունները:

2-րդ այլուսակում բերվում են աշխատանքային ծախսումների իշեցման տվյալները մեքենաների կիրառությամբ կատարվող մի շարք աշխատանքների գծով, համեմատած ձեռքով կատարված այդ նույն աշխատանքների հետ:

Խատանքի արտադրողականությունը, յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում կատարելով մի քանի տասնյակ բանվորների աշխատանքը: Տ—107 տիպի միշերեփանի բարձրիչների կիրառումը 14 տնգամ բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը ձեռքով բենելու և բեռնաթափելու համեմատությամբ: Խոկ բեռնոների մեքենայացված պատրաստումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը 6,5 անգամ և շաղախներինը՝ 4 անգամ: Սվաղային և ներկարարական աշխատանքների մեքենայացումը թույլ է տալիս բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 2 անգամ և այլն:

Խոկ ինչպիսի՞ն կլինի շինարարական պրոցեսների մեքենայացման մակարդակի ազգեցցությունը 1 այլուսակում բերված տվյալների համաձայն, շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա 6-րդ հյու-

## Ա Դ Հ Կ Ա Ն Ա Մ Հ 2

### Աշխատանքների անգամումը

և նըանց կատարման եղանակները

Զանի մեջմուլ	Մեքենայի մեջմուլ	Հերթափոխի մեջմուլ	Աշխատանքների մեջմուլ	Աշխատանքների մեջմուլ	Աշխատանքների մեջմուլ	Աշխատանքների մեջմուլ
1) կատերիրայի գրումի մշակումը մինչև 3 մ լորության փոստակներում՝ 0,25 մ³ տարողության շերեփի ունեցող էքսկավատորով . . . . .	մ³	158	3	53	29	9,8 անգամ
նույնը օ,5, մ³ տարողության շերեփի գեպքում . . . . .	մ³	336	3	113	62	20,8 անգամ
նույնը ձեռքով . . . . .	մ³	—	—	5,4	—	—
Բառունի պատրաստումը						
ա) առանձին բետոնաթառներում . . . . .	մ³	30	1,3	23	9	6,5 անգամ
բ) ձեռքով . . . . .	մ³	—	—	3,5	—	—
Ծաղկաների պատրաստումը						
ա) մեքենայացված եղանակով . . . . .	մ³	16	1,2	13,4	5	4 անգամ
բ) ձեռքով . . . . .	մ³	—	—	3,3	—	—
Ավաղային աշխատանքներ						
ա) մեքենայացված եղանակով . . . . .	մ³	—	—	26	2,0	2 անգամ
բ) ձեռքով . . . . .	մ³	—	—	13	—	—
Ներկարարական աշխատանքներ						
ա) նախաներկումը և ներկումը էլեկտրական ներկարարությունում . . . . .	մ³	—	—	190	2	2 անգամ
բ) գրձենով . . . . .	մ³	—	—	85	—	—
Երութերի (ավաղի, խիճի, կողիճի, խարամի և այլնի) բեռնումն ու բեռնաթափումը						
ա) Տ—107 միշերեփանի բարձրչներով . . . . .	մ³	175	1	175	14	14 անգամ
բ) ձեռքով . . . . .	մ³	—	—	12	—	—

Այսպիսով, 0,25 և 0,5 մ³ տարողությամբ շերեփի ունեցող միշերեփանի էքսկավատորների կիրառումը, նայած աշխատանքի պայմաններին, 9,8-ից մինչև 20,8 անգամ բարձրացնում է աշ-

քամյակի տարիների ընթացքում: Դրա համար օգտվենք ՍՍՌՄ Եինարարության և ճարտարակեալության ակադեմիային կից շինարարության էկոնոմիկայի ինստիտուտի տվյալներից, որոնք վե-

րաբերում են 1 մլն. ռուբլու կապիտալ ներդրում-ների դիմաց կատարման ենթակա շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալին:

Այդ տվյալների և կապիտալ ներդրումների ծավալների համաձայն, Հայկ. ՍՍՌ Շինարարության մինիստրության գծով 1956 և 1957 թթ. ընթացքում կոմպլեքսային մեքենայացված եղանակով կատարվել են և 1958—1960 թթ. ենթակա են կատարման ներքոհիշյալ աշխատանքները, Յ-րդ աղյուսակում նշված ծավալներով.

### Աղյուսակ 3

(Հազ. խոր. մ-ով)

Աշխատանքների անվանումը	Փաստորեն		Պ ա ն ք		
	1958թ.	1957թ.	1958թ.	1959թ.	1960թ.
Հողային աշխատանքներ . . . . .	4100	2800	4500	5400	6100
Քարի, ավաղի, կողի-ճի, լիճի ու լապամի բեռնաման և բեռնաթափման աշխատանքներ . . . . .	1500	2000	2500	3200	3800
Բետոնի պատրաստում . . . . .	120	160	192	240	290
Շաղախների պատրաստում . . . . .	60	106	150	185	250
Սվաղման աշխատանքներ . . . . .	—	—	38	140	230
Ներկարարական աշխատանքներ . . . . .	40	60	300	420	500

Յ-րդ աղյուսակի տվյալների համաձայն, 1960 թ. հողային աշխատանքների ծավալը, 1956 թվականի համեմատությամբ, կավելանա 5 մլն. մ<sup>3</sup>-ով: Այդ ծավալի աշխատանքների մեքենայացումը (աղյուսակ 2) հնարավորություն կտա միջին հաշվով 15 անգամ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, տնտեսելով 840 հազ. մարդոր: Հետևաբար, նշված ծավալի հողային աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը 1960 թվականին, շինարարության գծով ամբողջովին վերցված, աշխատանքի արտադրողականությունը կրաքարացնի 16,8 % -ով, 1956 թվականի համեմատությամբ: Մյուս տեսակի աշխատանքների գծով կատարված համանման հաշվումները ցույց են տալիս, որ շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության աճի գծով Յ-րդ հողային պահանով սահմանված առաջադրանքը կարող է կատարվել միայն աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման մակարդակը բարձրացնելու հաշվին:

Աշխատանքների մեքենայացման ընդհանուր մակարդակը բարձրացնելու հետ միաժամանակ անհրաժեշտ է իրագործել մի շարք միջոցառումներ շինարարության մեջ աշխատանքի արտադրողականությունը շեշտակի բարձրացնելու համար, շինարարական մեքենաների որակը բարելավելու հաշվին մեքենաների կոնտրուկցիաների բարելավումը, մեխանիզմների պարեկրի կոմպլեկտավորումը հայր և փոքր կարողության մեքենաների գուգորդմամբ, տեխնոլոգիական պրոցեսների ճշշտ կազմակերպումը շինարարական հրապարակներում (և այլն): Այսպես, շինարարական մեքենաների պարեկրի կոմպլեկտավորման գծով կիրառվող միջոցառումները պետք է ուղղված լինեն այն բանին, որ նրանք լրացվեն նոր էֆեկտավորություն մեքենաներով, ինչպես նաև այնպիսի փոքր կարողության մեքենաներով և մեխանիզմներով, որտեղ հզոր մեխանիզմներն ազատում են նրանց ոչ հատուկ աշխատանքների կատարումից:

Մեքենայացման ենթակա աշխատանքների մեծ ծավալը շինարարական կազմակերպությունների ղեկավարությունը պահանջում է պարզուղաց և մանրակիրիտ կերպով կազմել այդ աշխատանքների կատարման պլանները, խիստ զուգորդվելով միմյանց հետ լծորդված մեքենաներն ու մեխանիզմները: Այնտեղ, որտեղ այդ պայմանը պահպանվում է, կոմպլեքսային մեքենայացման բարձր մակարդակ է ձեռք բերվում: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է բարելավել էքսկավատորների, բուլտողերների, սկրեպերների օգտագործումը և ավելացնել նրանց ծառայության ժամկետները:

Սակայն 1958 թ. առաջին կիսամյակի փորձը ցույց է տալիս, որ շինարարական կազմակերպությունների տրամադրության տակ եղած մեխանիզմների պարեկը ժամանակի տեսակետից զնուանքավար չափով է օգտագործվում:

Աշխարակավոր ամբարձիչներ և այլ հզոր էֆեկտիվ մեքենաներ կիրառելիս, նրանց մաքսիմալ օգտագործումը հնարավոր է դառնում, երբ երբ նրանք հմտորեն զուգորդվում են փոքր կարողության սարքավորման և մեխանիզմների հետ: Այսպես, աշխարակավոր ամբարձիչները ամենից ավելի էֆեկտիվորներն օգտագործվում են շենքերի պատերն ու ծածկերը կառուցելիս, որից հետո

նրանք դեմոնտաժվում են այլ օբյեկտ տեղափոխելու համար: Իսկ մանր հատավոր և համեմատաբար թեթև բեռների տեղափոխման հետ կապված գործողությունների կատարման համար նպատակահարմար է օգտագործել փոքր կարողության վերահաններ և մեխանիզմներ, օրինակ, այսպես կոչված «լուսամուտի» ամբարձիչներ: Մինչեւ աշտարակավոր ամբարձիչները մեր կառուցներում օգտագործվում են ցածր էֆեկտիվությամբ:

Աշխատանքային հերթափոխի ընթացքում շատ ժամանակ է վատնվում մեքենաների պարապուրդների, վրա կազմակերպա-տեխնիկական և այլ պատճառներով, որոնք կապված են մեքենայի յուղման, լցավորման և խնամքի հետ: Վատեն օգտագործվում նաև մեքենաների կարողությունները: Այսպես, աշտարակավոր ամբարձիչների բեռնունակությունն օգտագործվում է միջին հաշվով միայն 25 %-ով: Սակավ չեն դեպքերը, երբ աշտարակավոր ամբարձիչը քարային աշխատանքները և հավաքովի երկաթբետոնային կոնստրուկցիաների մոնտաժն ավարտելուց հետո ամիսներով պարապ կանգնում է շինարարական հրապարակում, սպասելով դեմոնտաժման, կամ լավագույն դեպքում, օգտագործվում է մանր հատավոր բեռների փոխադրման համար:

Շինարարության փորձը ցույց է տվել, որ աշտարակավոր ամբարձիչները լավագույն կերպով օգտագործվում են երեք կամ չորս օբյեկտները միաժամանակ խմբային եղանակով սպասարկելու ժամանակի: Այդ դեպքում շինարարական աշխատանքները հոսքային մեթոդով կազմակերպելու շնորհիվ առավելագույն չափով խրտացվում է ամբարձիչի աշխատանքային ժամանակը և գործեա բացառում է մոնտաժի համար նյութերի կամ շինվածքների բացակայության պատճառով տեղի ունեցող պարապուրդի հնարավորությունը:

Ռեսպուբլիկայի նախագծային կազմակերպությունները նախագծերի և, մասնավորապես, նոր շեքերի գլխավոր պլանների մշակման ժամանակ պետք է անպայման հաշվի առնեն շինարարության մեքենայացումը լավագույն կերպով կազմակերպելու հարցերը:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել լավ հագեցված վերանորոգման բազա՝ շինա-

րարական մեքենաների և մեխանիզմների արագ վերանորոգման, շինարարական կարիքների համար պարզ մեխանիզմներ, գույք և ոչ ստանդարտային սարքավորում պատրաստելու համար: Դա կառուցողներին հնարավորություն կտա ավելի հաջող լուծել կոմպլեքսային մեքենայացման հարցերը և ավելի լավ օգտագործել բարձր արտադրողականության հզոր մեխանիզմները: Այդ բոլորի բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ ուսպուրիկայում շինարարական մեքենաները վատ են օգտագործվում: Այսպես, օրինակ, 1958 թ. առաջին կիսամյակի ընթացքում շինարարական կազմակերպությունների տրամադրության տակ եղած աշտարակավոր ամբարձիչների 13 545 մեքենա-օրերից ընդամենը բանեցված է 10 460 մեքենա-օր:

Պետք է հիշել, որ մեքենաները կարող են իրենց լրիվ կարողությամբ օգտագործվել միայն այն դեպքում, երբ նրանց կառավարում են բարձրորակ, իրենց արհեստը կատարյալ տիրապետող բանվորները: Մեքենայի կառավարումը նրա սպասարկող անձնակազմից պահանջում է իմանալ շինարարական-մոնտաժային աշխատանքների տեխնոլոգիան, մեքենաների կոնստրուկցիան, նրանց վերանորոգումը, բարձր հանրատեխնիկական պատրաստություն: Այդ պատճառով անհրաժեշտ է սիստեմատիկաբար կազմակերպել մեքենավարների, ամբարձիչավարների, մոտորիստների և այլ աշխատողների տեխնիկական մակարդակի ստուգում, օգնել նրանց շինարարական արտադրության նոր, բարդ տեխնիկային տիրապետելու գործում:

Շինարարական մեքենաների արտադրողականության բարձրացման հիմնական ուղղությունը հանդիսանում է նաև նրանց աշխատանքի հերթափոխների թվի ավելացումը: Այսպես, էքսկավատորների, բուլդոզերների, աշտարակավոր և թրոթուրավոր ամբարձիչների գծով արդեն 1959 թ. պետք է աստիճանաբար անցնեն 1,5—2 հերթափոխային աշխատանքի:

Անրարենպաստ է ուսպուրիկայում սվաղային և ներկարարական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման գործը: Առաջին կիսամյակի ընթացքում. 823 հազ. մ<sup>2</sup> ներկարարական աշխատանքներից սովորական մեքենայացված եղանակով կատարվել է միայն 271,0 հազ.

մշ կամ 33 %, իսկ 870 հազ. մ<sup>2</sup> սվաղային աշտանքներից սովորական մեքենայացված եղանակով (առանց կոմպլիքսային մեքենայացման) կատարվել է միայն 68 հազ. մ<sup>2</sup>, կամ մոտ 8 %-ը:

Մինչեւ միութինական առաջալոր կազմակերպություններում այդ աշխատանքների կոմպլիքսային մեքենայացման մակարդակը արդեն դեղադանցում է 65 %-ից:

Սվաղային աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակը բացատրվում է նաև գաջիշաղախը առաստաղին և պատերին քսելու համար հատուկ կառուցված ագրեգատի բացակայությամբ: Այդպիսի ագրեգատ ստեղծելու համար կոնստրուկտորական միտքը պետք է ամենայն կերպ քաջալերել և այդ ագրեգատը ուսապուրիկայում ստեղծել, որովհետև սվաղային գործը շատ աշխատատար է, իմիստ ձգձում է շինարարությունը և թանկացնում նրա արժեքը:

Ուսպուրիկայի շինարարության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար մեծ ռեզերվներ է պարունակում իր մեջ անցումը դեպի խոշոր պանելային շինարարությունը և լարված-ամրանավորված տարածական կոնստրուկցիաների լայն արժատավորումը: Վերջին 3 տարիների ընթացքում Հայաստանի շինարարները ավելի քան 6 անգամ ավելացրել են կառուցադրվող հավաքովի երկաթբետոնի քանակությունը 1 մլն. ուուրլու շինարարական-մոնտաժային աշխատանքների համար: Դրա շնորհիվ հաջողվել է զգալիորեն կրճատել 1 մ<sup>3</sup> շինարարական ծավալի կառուցման վրա կատարվող աշխատանքային ծախսումները: Այսպես, եթե 1 մ<sup>3</sup> ծավալի բնակարանային շինարարության վրա տեղի ունեցող աշխատանքային ծախսումները 1955 թ. կազմել են 2,04 մարդ-օր, ապա 1957 թ. այդ ծախսումները հավասար են եղել 1,65 մարդ-օր: 1957 թ. ընթացքում Շինարարության մինիստրության գծով աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 10 % -ով: Բնակարանային շինարարության 1,0 մ<sup>3</sup> ծավալի վրա սպասվող ծախսումները 1958 թ. կազմեն 1,45 մարդ-օր:

Սակայն հավաքովի երկաթբետոնի ներդրման համար ձեռք բերված մակարդակով մեր ուսպուրիկան խիստ ետք է մնում Սովետական Միության խոշոր քաղաքներից՝ Մուկայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, որտեղ 1,0 մլն ուուրլի շինա-

րարական-մոնտաժային աշխատանքների համար հավաքովի երկաթբետոնի ծավալը հասել է 200 մ<sup>3</sup>-ի, մեր ուսպուրիկայում ձեռք բերված 107 մ<sup>3</sup>-ի փոխարեն:

Նշված քաղաքներում բնակարանային շինարարության 1,0 մ<sup>3</sup> ծավալին ընկնող աշխատանքային ծախսումները չեն բերազանցում 1,0 մարդ-օրից, իսկ առանձին դեպքերում իշնում են մինչև 0,75 մարդ-օր: Հայաստանում այդ պրոցեսների աշխատատարությունը բացատրվում է «Միդիս» տիպի հին շարժածքի կիրառմամբ, որի հետևանքով քարե կոնստրուկցիաների կշիռը շատ զգալի է, իսկ բում շենքերի հավաքելիությունը բավական ցածր: Խոշոր պանելային շինարարությունն օպերատում է աշխատավեճքի այժմ դեռ չկան խոշոր-պանելային շենքերի կառուցման մշակված տիպային նախագծերը: «Հայբնակաղնախագիծ» նախագծային ինստիտուտը փորձնական կարգով նախագծում է խոշոր պանելային բնակելի շենք: Պետք է արագացնել այդ նախագծի համաձայն դետալների մշակումը, լուծել խոշոր պանելային բնակերը պատերը պատրաստելու և մոնտաժելու տեխնոլոգիայի հարցերը, ձեռնարկել պանելների արտադրությանը, ինչպես նաև նշված տան կառուցմանը այն հաշվով, որպեսզի այդ փորձի բազայի վրա արդեն 1959 թ. սկսած երեվանում կառուցել 20—30 խոշոր պանելային բազմահարկ բնակելի տներ: Խոշոր պանելային շենքերի շինարարությունը թույլ կտա 2 անգամ իշեցնել քարե շենքերի քաշը, բարձրացնել նրանց հավաքելիության ցուցանիշը և ավելի քան 4 անգամ բարձրացնել քարային աշխատանքների արտադրողականությունը:

Մասն բլոկներից միջնորմներ կառուցելու պրակտիկայից հրաժարվելը և սահմանակի չափի խոշոր պանելային միջնորմներին անցնելը խիստ կազմի աշխատանքային ծախսումների ընդհանուր բարանսի վրա: Այսպես, Սոսկվայում հաջողությամբ յուրացվում է երկաթբետոնի կոնստրուկցիաների արտադրությունը անընդհատ գլոցվածքի մեթոդով և արդեն երկրորդ տարին է, ինչ թողարկվում են խոշոր չափի գիպսից պատրաստված գլոցված միջնորմներ, որոնք հսկայական տնտեսական էֆեկտ են տալիս: Այդ մեթոդով 8,5 ամ հաստությամբ միջնորմների համար պատ-

բաստված պանելների յուրաքանչյուր 1 մ<sup>2</sup> վրա պահանջվում է ծախսել 0,3 մարդ-օր, մինչդեռ նույնպիսի պանելների պատրաստման համար, ուղղաձիգ կաղապարների մեջ ձուկելու դեպքում պահանջվում է ծախսել 0,88 մարդ-օր։ Այդ խոշոր պանելային միջնորմների մոնտաժը շինարարական հրապարակներում 6 անգամ կրճատում է աշխատանքային ծախսումները, մանր սալերից սովորական եղանակով հավաքվող միջնորմների համեմատությամբ։

Միջնարկային ծածկերի համար մեր ռեսպուբլիկայում ներկայում կիրառվող  $6,26 \times 1,20$  լափի բազմասնամեջ հավաքովի երկաթրետոններու պանելները ռացիոնալ չեն, քանի որ նրանց մեջ դեռ մեծ է պողպատի և ցեմենտի ծախսը, իսկ կառուցներում այդ համեմատաբար նեղ պանելների մոնոլիտացման վրա շատ ժամանակ և բանվորական ուժ է ծախսվում։

№ 9 տրեստի պոլիտոնում (Երևան) տարվում է բնակելի տների միջնարկային ծածկերի  $5,8 \times 2,4$  մ լափերի երկգորություն ունեցող նոր խոշոր պանելների փորձնական պատրաստումը։ Այսպիսի պանելները 1 մ<sup>2</sup> ծածկի համար պահանջում են 2 անգամ ավելի պակաս մետաղ, բետոն և բանվորական ուժ, քան այժմ կիրառվող բազմասնամեջ պանելները։

Արտադրական շենքերի ծածկերի հավաքովի կոնստրուկցիաներում դեռ թույլ է մեքենայացված չերմա-կ հիդրոմեկուսացնող շերտերի իրագործման գոյություն ունեցող պլոցեսը։ Բերուուսական ՍՍՌ № 5 տրեստում մշակվել և փորձարկվել է  $3 \times 6$  մ լափի կոմպլեքսային հավաքովի լարված ամրանավորված պանելը՝ տաքացուցիչով, ասֆալտային ձգիչով և մեկ շերտ պերգամինի կազմումով։ Կառուցում այդպիսի պանելը տեղադրելուց հետո մնում է իրագործել հիդրոմեկուսիչ գորգի վերին շերտերը, որը բզմակիորեն բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը փաթթոցային տանիքների կառուցման ժամանակ։

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու մեջ, դեռ չհայտնաբերված ռեզերվներ կան մեր արդյունաբերական և քաղաքացիական կառուցյաների յուրաքանչյուր կոնստրուկցիայում։ Կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման լայն կիրառումը, նոր տեխնիկայի արժատավորումը, առկա կարողությունների լուրիվ օգուագործումը, շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման կատարելագործումը հանդիսանում են շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման վճռական պայմանները։

## ՄԱՆՈՂ ԵՎ ՀԱՆՈՂ ԲՈՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

### Է. ՀԱՐԴԻԹՅՈՒՆՅԱՆ

#### Տնեխագետ

Հայկ. ՍՍՌ բրդեղենի արդյունաբերության բանվորների աշխատանքի արտադրողականության մակարդակի հետ կապված հարցերը քըննարկելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձնել հիմնական պրոֆեսիաների խտացման աստիճանի վրա։ Մասնավորապես, Երևանի բրդյան նույրը գործվածքների կոմբինատում № 24 և № 32 մանվածք արտադրելիս մանող բանվորուհին սպասարկում է 200 իլիկ, Կոմբինատում աշխատանքի և սարքավորման արտադրողականությունը զգալիորեն ետ է մնում ( $25-30\%$ -ով) ցածր

է հայրենական առաջավոր ձեռնարկությունների արտադրողականության մակարդակից։

Բարձր արագություններով աշխատանքը և առանձին գործողությունների կատարման արագային մեթոդները նպաստում են աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացմանը։ Այսպես, օրինակ, 1958 թվականի առաջին կեսին № 32 հենքի արտադրության համար առանձին մեքենաների վրա իլիկների արագությունը տատանվում էր 5300 մինչև 6670 պար/րոպե, իսկ ոլորքը՝ նորմայով նախատեսված 500-ի փոխա-